

## «ՀԱՅ ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»

(Միջազգային գիտաժողով՝ Եվիբլամ Սիրարփի Տեր-Ներսեսյանի ծննդյան 100-ամյակին)

«Հայ արվեստը և ճարտարապետությունը» — այսպես էր կոչվում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունից 30.08.2040-ի ազգային հանձնաժողովի և Երևանի պետական համալսարանի հայ արվեստի պատմության 30.08.2040-ի նորաստեղծ ամբիոնի կողմից համատեղ կազմակերպված միջազգային գիտաժողովը, որը տեղի էր ունենում 3—5-րդ Այն Եվիբլամ էր 29.08. արտասահմանյան, ինչպես նաև բրիտանական, ֆրանսիական և ամերիկյան ակադեմիաների անդամ, մեծանուն արվեստագետ ու արվեստաբան, բյուզանդագետ ու հայագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանի ծննդյան 100-ամյակին: Գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին արվեստաբաններ ու արվեստագետներ, պատմաբաններ ու հայագետներ՝ ինչպես Հայաստանից ու Սփյուռքից, այնպես էլ Ռուսաստանից, Իտալիայից, Ավստրիայից, Սիրիայից և այլ երկրներից:

Գիտաժողովի բացումը տեղի ունեցավ հոկտեմբերի 3-ին, Երևանի պետական համալսարանի գիտխորհրդի նիստերի դահլիճում, իր բացման խոսքում ԵՊՀ ղեկավար, ակադ. Թ. Մարտիրոսյանը շնորհավորեց բոլոր ներկաներին համալսարանի կյանքում տեղի ունեցող այդ կարևոր իրադարձության առթիվ: Նա ասաց, որ ներկա միջազգային գիտաժողովը համընկնում է Երևանի պետական համալսարանում արվեստաբանության բաժնի բացման և հայ արվեստի պատմության 30.08.2040-ի ամբիոնի ստեղծման հետ: Այսօր իրականություն է դառնում մեր գրականության ու արվեստի, հոգևոր մշակույթի մեծերի տասնամյակների և բազանքը, արվեստաբան մասնագետների պատրաստման ուղղության նրանց թափած ջանքերը տալիս են իրենց պտուղները:

Հիշյալ բաժնի և ամբիոնի ստեղծումը, շարունակեց ղեկավարը, ոչ միայն մեր՝ ժամանակակիցների ցանկությունն էր, այլև պարտավորություն էր, որը թելադրված էր նրանց կողմից: Մեր ավագները ծառայել են մեր ժողովրդին, մեր արվեստի դարգացմանը: Նրանցից շատերը հիմա շկան, և նրանց փոխարինող է պետք: Դա պիտի տեղի ունենար մեր մայր կրթոջախում, համալսարանական կրթության մեջ: Բացի այն, որ ամբիոնն ու բաժինը պետք է պատասխանատվությամբ կրեն հայ արվեստն աշխարհին արժանիորեն ներկայացնելու կոչումը, նրանք նաև իրենցով պիտի լրացնեն համալսարանի հումանիտար մասնագիտությունների շարքում արվեստաբանության մասնագիտության բացը: Ահա այս պատասխանատվությամբ և նկատառումներով երևրտարի առաջ սկսեցինք նախապատրաստական

աշխատանքներ՝ գրագրություն 30.08.2040-ի հետ՝ ամբիոնի բացման նպատակով: Այդ գործում 30.08.2040-ի և համալսարանի միջև միջնորդ օղակը այդ նպատակով ստեղծված հանձնաժողովն էր տիկին Վարդուհի Տեր-Ասատուրյանի ղեկավարությամբ: Մեր ծրագիրը հովանավորվեց 30.08.2040-ի կողմից, և կնքվեց համապատասխան պայմանագիր: Եվ այդպես ստեղծվեց հայ արվեստի պատմության ամբիոնը:

Նորաստեղծ ամբիոնի նպատակն է, այնուհետև ասաց հայ, գիտական լայն աշխատանքներ ծավալել հայկական քանդակագործությունը, ճարտարապետությունը, նկարչությունը, հատկապես միջնադարյան մանրանկարչությունը հետազոտելու համար և զրա հետ մեկտեղ հայ արվեստը ներկայացնել մեր և միջազգային հանրությանը: Ամբիոնը պարբերաբար կկազմակերպի նաև հայ արվեստին ու նրա փոխադրություններին նվիրված գիտաժողովներ, որոնցից առաջինը մեր ներկա կոնֆերանսն է: Այսպես ղեկավարը նստաշրջանի մասնակիցներին մաղթեց աշխատանքային ու գիտական հաջողություններ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև 29.08. փոխնախագահ, գիտաժողովի կազմկոմիտեի պատվավոր նախագահ, ակադ. Գ. Մարգարյանը, որի խոսքը ներկաների կողմից ընդունվեց ջերմությամբ: Իսկ Հայաստանի 30.08.2040-ի Ազգային հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Վ. Ասատուրյանի ողջույնի խոսքում կարևորվեց համաժողովի միջազգային նշանակությունը և նրա հրատապությունը՝ հայ արվեստի հարուստ ավանդույթները ժողովրդականացնելու գործում:

Գիտաժողովի աշխատանքներին իր մասնակցությունն էր բերել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ը, որի սրտաբուխ ելույթը լավեց մեծ ուշադրությամբ ու հետաքրքրությամբ: Հայոց Վեհափառ Հայրապետը նշեց, որ ինքը բախտ է ունեցել գրելու Սիրարփի Տեր-Ներսեսյանի գրքերից մեկի՝ «Ապահանի հայկական մանրանկարչությունը» աշխատության առաջաբանը: Այդ գիրքը, շարունակեց նա, հայ մանրանկարչության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի: Այս Վեհափառ Հայրապետը խոսեց մեծանուն արվեստագետի աշխատություններից ստացած իր տրպավորությունների մասին և օրհնությամբ ավարտեց իր ջերմ ու հուզիչ խոսքը:

Այնուհետև ակադեմիկոս Սիրարփի Տեր-Ներսեսյանի կյանքի, գործունեության և արվեստաբանական վաստակի մասին հանգամանալից զեկուցումով հանդես եկավ գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, հայ արվեստի

պատմութիւն նորաստեղծ ամբիոնի վարիչ, այս-  
վետագիտութեան թեկնածու, ՅՈՒՆԵՍԿՕ-ի  
պրոֆեսոր Լ. Չուգասզյանը նա սասց, որ Սի-  
րարփի Միջնադարի Տեր-Ներսեսյանը ծնվել է  
1896 թ. սեպտեմբերի 5-ին, Կոստանդնուպոլի-  
սում: Սկզբնական կրթութիւնն ստացել է Կ.  
Պոլսի էսայան վարժարանում, ապա ծննդավայ-  
րում ավարտել է անգլիական բարձրագույն  
դպրոց (Հայ-սքուլը): 1917—19 թթ. ուսանել  
է ժնեփ համալսարանում, որից հետո տեղա-  
փոխվել է Փարիզ և Սորբոնի համալսարանում  
աշակերտել բյուզանդագետներ Շ. Դիլիէն ու Գ.  
Միլեյի, ուսմանական ու գոթական արվեստնե-  
րի մեծ գիտակ Լ. Տոստիոնին: Փարիզի բարձ-  
րագույն ուսումնասիրութիւնների դպրոցում  
1922-ին դարձել է Գ. Միլեյի ասիստենտը,  
1930—31-ին եղել ԱՄՆ-ի Մասսաչուսեթս նա-  
հանգի Ուելեսլիի քոլեջի արվեստի պատմու-  
թեան դասախոս, 1937—47 թթ. նույն քոլեջի  
արվեստի բաժնի և Ֆրանսիոյի թանգարանի  
տնօրէն: 1946-ին Հարվարդի համալսարանի  
Դամբարտոն Օկս գիտահետազոտական հաստ-  
տութիւնում արժանացել է բյուզանդական ար-  
վեստի պրոֆեսորի գիտական կոչման, 1963-ից՝  
վաստակավոր պրոֆեսոր էր, իսկ 1966-ից՝  
ՀԳԱ արտասահմանյան անդամ: Վախճանվել է  
1989 թ., թաղված է Փարիզում:

Սիրարփի Տեր-Ներսեսյանը, շարունակեց զե-  
կուցողը, նաև մի շարք պարզեցներ ուներ ու  
մրցանակների դափնեկիր էր, որոնցից են Անգ-  
լիայի հնագետների միութեան ոսկե շքանշանը  
(1960 թ.), Ֆրանսիայի արձանագրութիւնների  
ու գեղարվեստական գրականութեան ակադե-  
միայի Շլյուսմբերգի անվան (1963 թ.), ՀԳԱ  
Անանիա Շիրակացու անվան (1981 թ.) մրցա-  
նակները և այլն: Զեկուցումներով հանդես է  
եկել միջազգային գիտաժողովներում, այդ թը-  
վում արևելագետների մոսկովյան կոնգրեսում  
(1960 թ.) և պատմաբանների խորհրդաժողով-  
անիական երևանյան գիտաժողովում (1969 թ.),  
և այլն:

Ս. Տեր-Ներսեսյանը, հավաստեց զեկուցողը,  
բյուզանդական և հայ արվեստներին նվիրված  
150-ից ավելի հետազոտութիւնների ու մենագ-  
րութիւնների հեղինակ է, որոնք նրա բերել  
են համաշխարհային հռչակ ու հեղինակութիւն:  
Նրա գիտական առաջին աշխատութիւններից  
մեկը, սասց զեկուցողը, որ գրված է ֆրանսե-  
րեն ու վերնագրված «XII—XIV դդ. հայկական  
եկարագարը ձեռագրերը Վենետիկի Միսիթար-  
յան հայրերի գրադարանում» (1936 թ.), նը-  
վիրված է հայ միջնադարյան արվեստի պատ-  
մութեան խնդիրներին, իսկ «Բարեղամի և  
Հովասափի վեպի եկարագրողումը» (1938 թ.,  
ղարձայլ ֆրանսերեն) և «Հայաստանը և Բյու-  
զանդական կայսրութիւնը» (1945 թ., անգլե-  
րեն) գրքերը խոշոր ներդրում են բյուզանդա-  
գիտութեան և հայ-բյուզանդական կապերի ու-  
սումնասիրութեան պատմութեան մեջ: Այդ աս-  
պարեզում հատկապես արժեքավոր է նրա

«Բյուզանդագիտական և հայկական ուսումնա-  
սիրութիւններ» երկհատորյակը (1973 թ.), որի  
մեջ ընդգրկված են հեղինակի՝ անգլերեն և  
ֆրանսերեն գրված 60-ից ավելի ուսումնասի-  
րութիւնները: Հայկական արվեստի պատմու-  
թեան ու տեսութեանը նվիրված նրա աշխա-  
տութիւնների շարքում մեծ արժեք ունի «Հայ-  
կական արվեստ» (1977 թ.) անգլերեն գիրքը,  
որը «Հայ արվեստը միջնադարում» (Երևան,  
1975) աշխատութեան ամբողջական հրատարա-  
կութիւնն է: Նա մի շարք աշխատութիւններ է  
նվիրել նաև հայ միջնադարյան եկեղեցիների  
ու դրանցում ստեղծված ձեռագրերի ուսումնա-  
սիրութեանը:

Վենետիկի համալսարանի հայագիտութեան  
ամբիոնի վարիչ, հայր Լեոն Զեթյանի զեկու-  
ցումը նվիրված էր «Հայագիտութիւնը և հայ  
արվեստարանութիւնը» թեմային, որի մեջ հե-  
ղինակը քննութեան առավ այս երկու հասկա-  
ցութիւնների փոխհարաբերութիւնը: Ապա անդ-  
րադարձավ հայագիտութեան ընդհանուր ծիւրի  
մեջ հայ արվեստի բազմակողմանի ուսումնա-  
սիրութեան խնդիրներին, վեր հանեց այդ աս-  
պարեզում եղած հաջողութիւններն ու թերա-  
ցումները:

ՀԳԱ ակադեմիկոս, ճարտարապետութեան  
մեծ գիտակ Վ. Հարութիւնյանը գիտաժողովում  
հանդես եկավ հետաքրքիր զեկուցումով՝ նվիր-  
ված անհարկի մոտացութեան մատնված գիտ-  
նական Արմեն Խաչատրյանի կյանքին ու գոր-  
ծին, որը տարիներ շարունակ եղել է Սիրարփի  
Տեր-Ներսեսյանի մտերիմ ու գործընկերը Ֆը-  
րանսիայում: Նա է իր բազմաթիվ աշխատու-  
թիւններով հայկական ճարտարապետութիւնը  
ներկայացրել օտարազգի մասնագետներին,  
վերջում ընդգծեց պրոֆ. Վ. Հարութիւնյանը:

Մեծ հետաքրքրութեամբ լսվեց նաև Վիննա-  
յի համալսարանի պրոֆեսոր Հելմուտ Բուշհաու-  
զենի «Վաղ գոթական-իտալական ազդեցութիւ-  
նը հայկական ձեռագրերի մանրանկարների  
վրա» զեկուցումը, որի մեջ հեղինակը առկա  
նյութերի հիման վրա ցույց տվեց հայ միջնա-  
դարյան արվեստում եկատմող իտալական ու  
վաղ գոթական ազդեցութիւնները: Զեկուցողն  
անդրադարձավ նաև մի շարք անհայտ ստեղծա-  
գործողութիւնների՝ միաժամանակ ցուցաբերելով  
դրանց գունավոր լուսապատկերները:

«Բուն Աղվանքի խաչքարերը»—այսպես էր  
վերնագրված Ս. Կարապետյանի զեկուցման թե-  
ման, որի մեջ հեղինակը քննարկեց հայաթափ-  
ված վայրերի խաչքարերի արժեքն ու նշանա-  
կութիւնը: Գիտաժողովի մասնակիցները հե-  
րավորութիւն ունեցան տեսնելու Շամախու  
շրջանում և այլ վայրերում գտնվող և մինչ  
այդ անհայտ ու բոլորովին չհրատարակված  
խաչքարերի լուսանկարները: Զեկուցողը վերլու-  
ծեց դրանց առանձնահատկութիւններն ու պատ-  
մական տեղեկութիւններ տվեց այդ կոթողնե-  
րի ժամանակի ու կառուցման մասին: Նա խո-  
սեց նաև Աղվանքի տարածքում գոյութիւն

ունեցած հայկական գրչակներոններէ մասին, որոնք հայտնի են միայն ձեռագրերում, ցույց տվեց բազմաթիվ ավերակված եկեղեցիների լուսանկարներ:

Գիտաժողովի առաջին օրվա վերջին զեկուցումը նվիրված էր ճարտարապետության մեջ հայ-սելջուկական փոխհարաբերություններին, որի հեղինակն էր Գավիթ Կերտմենչյանը (Սիրիա, Հալեպ): Նա մի շարք օրինակներով հաստատեց այդ փոխանջությունների իսկությունը և նշեց, որ անհրաժեշտ է բազմաղղմանիորեն ուսումնասիրել դրանց ակունքներն ու հետագա ընթացքը:

\*\*\*

Գիտաժողովի ընդմիջման ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի և նրան ուղեկցող հոգևոր հայրերի օրհնությունը, հանդիսավոր պայմաններում, պատմության ֆակուլտետում բացվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայ արվեստի պատմության ամբիոնը, որը հիմնադրվել է միջազգային այդ հեղինակավոր կազմակերպության հովանավորությամբ և համալսարանի ղեկավարության, հատկապես ռեկտոր, ակադ. Ռ. Մարտիրոսյանի նախանձախնդիր ջանքերով: Ելույթ ունեցողները նշեցին, որ ԵՊՀ հայ արվեստի պատմության ամբիոնը դառնալու է հայ արվեստի ուսումնասիրության միջազգային գիտական կենտրոն: Այստեղ դասախոսներ ու մասնագետներ են գալու ոչ միայն ՅՈՒՆԵՍԿՕ-ից, այլև աշխարհի շատ երկրներից և հայ ու համաշխարհային արվեստներին նվիրված դասախոսություններ կարդալու նորաստեղծ արվեստաբանության բաժնում: Իսկ ինչո՞ւ է արվեստաբանության բաժինը ստեղծվել պատմության ֆակուլտետի կազմում: Այս հարցին պատասխանելով, ռեկտորը իր ելույթում նշեց, որ չի կարելի գառնալ լավ արվեստագետ, առանց իմանալու համաշխարհային մշակույթի պատմությունը, ընդհանուր պատմագիտական դասընթացներ: Բացի այդ, պատմական նշանավոր գործիչներից շատերը գործելով պատմական որոշակի հանգամանքներում, եղել են արվեստի ու մշակույթի հովանավորներ ու կազմակերպիչներ և սա ես չպետք է շրջանցել: Ինչպես նշվեց, բաժնում մեծ տեղ է տրվելու պատմագիտական առարկաների դասավանդմանը, ուսուցանվելու են կրոնի և եկեղեցու պատմությունն ու տեսություն, հայ արվեստի պատմությունն ու արվեստագիտական այլ առարկաներ: Դրանք դասավանդելու համար հրավիրվելու են թե Լ. րիտասարդ և թե փորձառու մասնագետներ, օվթեր մասնագիտական կրթությունն են ստացել մեզ մոտ և այլուր: Մենք կամենում ենք ամբիոն հրավիրել նաև մեր լավագույն արվեստաբաններին, որոնք ավարտել են Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի համալսարանների արվեստաբանական բաժինները և ներկայումս ճանաչված գիտնականներ են: Ուսանողները, հին և նոր հայերենից բացի, կուսումնասիրեն նաև

օտար լեզուներ, հունարեն ու լատիներեն: Ներանցից յուրաքանչյուրը պետք է կատարելապես տիրապետի մի որևէ օտար լեզվի, բանի որ նրանց ուսումնասիրության ընթացքում դասախոսություններ կարդալու, հատուկ դասընթացներ վարելու համար հրավիրվելու են օտարալզի մասնագետներ: Օտար լեզուների իմացությունը մեր շրջանավարտներին անհրաժեշտ կլինի նաև հետագայում՝ աշխատանքում ու գիտահետազոտական գործընթացներում:

Ամբիոնը պետք է դառնա նաև արվեստաբանական գրականության ստեղծման ու հրատարակման օջախ, այն պետք է նպաստի Հայաստանում արվեստագիտական պարբերականի հիմնադրման ու հրատարակման գործին, ռադիո-հեռուստատեսային հաղորդումների ու հայկական կինոարվեստի զարգացմանը:

\*\*\*

Հոկտեմբերի 4-ին գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) նիստերի դահլիճում: Այստեղ ընթերցված շուրջ մեկ տասնյակ գեկուցումները հիմնականում վերաբերում էին հայ միջնադարյան արվեստի պատմությանն ու տեսությանը, բնությունն էին առնում ճարտարապետության, ձեռագիր մատյանների ձևավորմանն ու մանրակարուկության, գորգագործության, դիմանկարչությանն ու գրքարվեստի հետ առնչվող պանագան խնդիրներ և միաժամանակ վերհանում Ս. Տեր-Ներսեսյանի դերն այդ ամենի գիտական համակարգման ու ուսումնասիրության գործում: Զեկուցումները հատկապես արժեքավոր էին նրանով, որ նվիրված էին արվեստագիտությանը մինչ այդ անհայտ փաստերի: Օրինակ, գիտաժողովի մասնակիցների շրջանում մեծ հետաքրքրություն առաջացրեց ավստրիացի արվեստաբան Հայդե Բուշնուզենի «Օրկորդը համաշխարհային պատերազմից առաջ կոչվում գտնվող և կորած համարվող Սկևռայի 1197 թ. նորահայտ ավետարանի մանրանկարները» գեկուցումը: Ըստ հեղինակի, այդ Ավետարանը ժամանակին ստեղծվել է Հայոց Լեոն Մեծագործ թագավորին օծելու համար: Եվ այն հետագայում, երկար «ղեզերումներից» հետո», պանագան ճանապարհներով հասել է Լեհաստան, և ներկայումս պահվում է Արևմտյան Ուկրաինայի կենտրոն կոչվ թաղաքում:

Նորություն էր նաև Լ. Չուգասոյանի «Գիտությունը լեոն արքայազնի դիմանկարի մասին» հաղորդումը, որի մեջ հեղինակը գիտաժողովի մասնակիցների ուշադրությունը հրավիրեց հիշյալ նկարի վրա, տվեց նրա ստեղծման պատմությունը և այն գնահատեց որպես արվեստի մեծարժեք գործ:

Մատենադարանում կարդացված մյուս նյութերը ևս նվիրված էին հայ արվեստի պատմության ու տեսության հրատապ խնդիրներին:

Ուրախալի էր նաև այն հանգամանքը, որ գիտաժողովում ավագ սերնդի գիտնականների հետ զեկուցումներով ու հաղորդումներով հանդես եկան երիտասարդ Նետպոստոլները: Նրանցից մեկն էր Ս. Տեր-Ներսեսյանի անվան առաջին գիտակրթաթղակառու նազնի Ղարիբյանը և երկրորդը՝ ՀԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող Միքայել Առաքելյանը, որոնց հաղորդումները նվիրված էին Մատենադարանում պահվող առանձին արժեքավոր ձեռագրերի մանրանկարների ու XVII դարի առաջին կեսի մանրանկարիչ Մեսրոպ Խիզանցու ստեղծագործությունների վերլուծությանը, և առաջացրին լուրջ հետաքրքրություն:

\*\*\*

Գիտաժողովի եզրափակիչ նիստերը տեղի ունեցան հոկտեմբերի 5-ին, ՀԳԱԱ նիստերի դահլիճում: Այնտեղ առաջինը «Միջնադարյան հայկական ճարտարապետության հուշարձանները Մոլդավիայում» զեկուցումով հանդես եկավ Ա. Թորամանյանը, որը վեր հանեց Բեսարաբիայի հայ գաղթօջախի շինարարական գործունեության պատմությունը և հանգամանորեն ներկայացրեց հայ ճարտարապետների ու քարագործ վարպետների կողմից կառուցված կոթողային շինություններն ու եկեղեցիները, ներանց կառուցողական արժեքն ու նշանակությունը, ինչպես նաև թողած ազդեցությունը տեղական ճարտարապետության վրա:

Նորություն պետք էր համարել իտալահայ գիտնական, պրոֆ. Գարրիելա Ուլուհոջյանի զեկուցումը Բոլոնիայի համալսարանի գրադարանում իր կողմից հայտնաբերված XIX դարի հայ երևելի մշակութային գործիչ Երեմիա Քյումուրճյանի կնիքած նկարազարդ քարտեզի մասին, որի մեջ ներկայացված են գրեթե բոլոր պատմական հայաբնակ շրջաններն ու բլանկավայրերը:

Հետաքրքրությամբ լսվեցին նաև Վ. Թաթիկ-

յանի «Միջնադարյան հայկական գորգերի և հարթաքանդակների առնչությունները», Ա. Տեր-Մինասյանի «Վաղ միջնադարյան Հայաստանի և այլ երկրների երկայնական տիպի եկեղեցիների ընդհանրություններն ու տարրերությունները», է. Պետրոսյանի «Պարզ հայ միջնադարյան մանրանկարչության մեջ», Գ. Վարդումյանի և Կ. Թոխաթյանի «Արվեստի դրսևորման որոշ ասպեկտներ Հայաստանի ժայռապատկերներում և հայ դիցարանության մեջ» զեկուցումները, որոնց մեջ դրանց հեղինակները պարզաբանեցին արվեստարանական զանազան հարցերու Իսկ ճարտարապետ Վ. Իսաբեկյանի զեկուցումը, որը վերջինն էր, նվիրված էր պատմական Հայաստանի շինարարական արվեստի առանձնահատկություններին և հուշարձանների երկարակեցության խնդիրներին:

Վերջում եզրափակիչ խոսքով հանդես եկավ գիտաժողովի կազմկոմիտեի պատմավոր նախագահ, ՀԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադ. Գ. Սարգսյանը և բարձր գնահատեց եւորյա նրատաշրջանի աշխատանքը՝ միաժամանակ ընդգրծելով նրա միջազգային հնչողությունը:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեց Հայաստանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ազգային հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Վ. Ասատուրյանը: Նա հույս հայտնեց, որ մեծահամբավ արվեստագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանի հիշատակին նվիրված ներկա գիտաժողովն այսուհետև կդառնա ավանդական ու կվերածվի ամենամյա «Արվեստաբանական ընթերցումների»:

Գիտաժողովի արտասահմանյան մասնակիցներն ու հյուրերը այդ օրերին ծանոթացան Երևանի պետական համալսարանի, Մատենադարանի, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի կառուցվածքներին ու աշխատանքներին, եղան մայրաքաղաքի մշակութային օջախներում և տեսարժան վայրերում:

Վ. Ս. ՄԱՂԱԿՅԱՆ